

հաստատուել է 1872 թուին Տոկիո մայրաքաղաքում: Մանկավարժական ընկերութիւնների գործունէութիւնը բազմատեսակ է. նրանք են հրաւիրում ժողովներ, որտեղ քննադատում են մանկավարժական խնդիրներ. նրանք են հրատարակում մանկավարժական ամսագրեր. նրանք են կազմում դասագրքեր, ծրագրեր մշակում, ժողովրդի կրթական գործի մասին հետազոտութիւններ անում. նրանք են հիմնում ընդհանուր ու մասնագիտական կրթութիւն տուող դպրոցներ. նրանք են կազմակերպում դպրոցական ու դասական պիտոյքների ցուցահանդէսներ, ժողովրդական դասախօսութիւններ, կոնցերտներ, պարզեներ են տալիս ժողովրդի կրթութեանն առանձին ծառայութիւն անողներին և այլն: Այս տեսակ ընկերութեան անդամ կարող են լինել թէ մանկավարժութեամբ պարապողները և թէ առհասարակ այն մարդիկ, որոնք հիտաքըքըրում են ժողովրդի զարգացման գործով: Ահա այս բոլոր փաստերն ի նկատի առած՝ շատ իրաւացի են ասում, որ Նապոնիայում ժողովրդի կրթական գործը ամենակարճ ժամանակում հասել է տյնպիսի հետեանքի, որ նա դրանով կարող է պատուաւոր տեղ բռնել քաղաքակիրթ երկրների շարքում:

ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ

ՂՐԻՄԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ

Պանդխտութեան դիւթիչ գաւազանը ձեռին՝ հայը դիմել է և դէպի հեռաւոր հիւսիս—Քաթարստան: Ախսարայ կոչուած քաղաքում, որ գտնւում էր Կազանի և Աստրախանի մէջ տեղը, 7 դար առաջ մօտ 40 հազար հայ ընակութիւն հաստատեցին: Սակայն այստեղ ևս բարեկեցիկ կացութիւն, ապահով վիճակ չգտնելով՝ նրանք ստիպուած եղան դիմել ակելի հեռաւոր վայրեր—Լեհաստանի, Ղրիմի և Մուղաւիայի կողմերը: Գաղթականական ամենամեծ հոսանքը շարժուել էր դէպի Ղրիմ—Սև ծովի հիւսիսային ափերը, որտեղ գեներացիների Բարեշէն Կաֆայի կամ Թէոդոսիայի իշխանապետը սիրով յանձն առաւ տեղաւորել իր երկրում՝ տարագրուած հայերին, մանաւանդ որ հայ ազգի ջանասիրութեան և եռանդի բարի համբաւը վաղուց արդէն հասել էր նրա ականջին:

Թէոդոսիայում գրուած մի մագաղաթեայ հին յայտաւոր-
բում հետեւեալ պատմութիւնն է արուած՝ Ախսարայից դէպի
Ղրիմ գաղթող հայերի մասին. «Եւ որք յԱխսարայ եկին,
հրաման տուալ ի թաթար խանէն ընակեցան անդ ոչ բա-
զում ժամանակս, որ էր զայս ՉՊԸ (1299) թուին, վա-
սըն գի մինչ նեղեալ եղեն ի թաթարացն՝ դեսպան յղեն
ի Ղրիմ առ իշխանն ջինիւիզաց, որ ընակէր ի մէջ
Փոանկ հիսարին Փէօդօսիու. ուխտ դնեն ընդ իշխանին Փէօ-
դօսիու ելեալ ի Ախսարայէ իշխանք եւ ազնիւք եւ հասարակ
ժողովուրդք վառեալք զինու պատերազմելով ընդ թաթա-
րացն ճեղքեալ գան ի Ղրիմ, եւ ընակին ի Փէօդօսիա, ի
Կազարաթ, եւ ի Սուրխաթ եւ ի կողմանս սոցա. այս եղել
ՉՀԹ (1330) թուին»: Եւ այսպէս՝ հայերը զէնքի միջոցով
ճանապարհը մահմէդականներէց հարթելով՝ 1330 թուականին
աջողութեամբ տեղափոխուում են Ղրիմ—իրանց նոր գաղթա-
վայրը:

Ցրուելով Ղրիմի հարաւային ափերում հայաստանցի
տարագրուած հայը իր կորցրած հայրենիքի հրաշագեղ քնքոյշ
կարօտն էր առնում այստեղի դալարակուրծ լեռներում ու վիթ-
խարի անտառներում... «Յայնժամ զօրացաք մեք եւ ըազմա-
ցաք,—ասում է նոյն յայտաւորքը—եւ շինեցաք զգիղս եւ
զգաւառս իշխանք եւ ազնուականք ի Ղարապազարէն սկըս-
եալ մինչեւ ի Սուրխաթ եւ ի Փէօդօսիա, ի լեռինս եւ ի
դաշտս լի արարին վանօրէիք եւ եկեղեցեօք մինչեւ Սուր-
խաթ (այժմ Հին-Ղրիմ): Եւ շինեցաք տունք հարիւր հազար,
եւ զեկեղեցիս հազար»...

Ուրեմն ի միջի այլ բազմաթիւ եկեղեցիների և հոյակապ
շինութիւնների անցի հայ շինականները բնութեան մի մը-
խիթարիչ խորշում կառուցանում են ամրապարիսպ և բերդա-
նըման ս. Սաչ վանքը: Այս գեղեցկադիր մենաստանի կառու-
ցումը կատարուել է տասնէնորրորդ դարի կիսում:

Այժմ հետաքրքիր է այդ բազմադարեան վանքը մանա-
ւանդ նրանով, որ ամբողջ Ղրիմում հին ճարտարապետական
հոյակապ մնացորդներից միակն է համարում որպէս նմուշ մեր
անցեալից մնացած բազմաթիւ յիշատակարանների: Վանքի
հիմնադիրները եղել են մի կրօնաւոր և իր եղբայրները: Տա-
ճարի հիմնարկութեան մասին նրա բազմանկիւնի բարձր զրմ-
բէթի վրայ կայ մի տողանի արձանագրութիւն:

Վանքում գտնուած և այլ բազմաթիւ արձանագրութիւն-
ներն ևս շատ բան են ասում զրիմցիներիս անցեալի վերա-

բերմամբ, ուստի այդ մենաստանի համառօտ պատմութեամբ — նրա անցեալով և ներկայով — կը զբաղուենք մենք այժմ:

Ինչպէս արդէն յայտնի է վանքի բաղմամբիւ արձանագրութիւններէց, հին ժամանակ ս. Սաչ վանքը կրում էր ս. Նշան անունը, որ միևնոյն նշանակութիւնն ունի: Դժբախտաբար ոչ մի աղբիւր չգտանք իմանալու, թէ երբ և ինչո՞ւ սկսել են գործածել ս. Սաչ, իսկ ոուսաց պաշտօնական թղթերումն է՛լ ս. Գէորգ անունը: Ցանկանալով սակայն վանքին վերստին սեփական անունը տալ՝ Սորէն եպիսկոպոսը՝ «ս. Գէորգ վանք» գրելու ստիպուած լինելով հանդերձ, պաշտօնական թղթերում սկսել է միշտ աւելացնել «նոյն և ս. Սաչ» խօսքերը:

Ս. Սաչ կոչուում էր ոչ միայն վանքը, այլև այն մեծ սաւրը, որի ստորոտում ձգուել էին այժմեան Բոլղարանոցի տեղ եղած նախկին Կազարաթ կոչուած հայկական մեծ աւանն ու վերջինիս դրացի՝ Թաթարների հոյակապ Ղրիմ քաղաքը, որին գենուացիները ըստ սովորութեան շարունակում էին ասել Սուրխաթ, որը իբր թէ սուրբ խաչ խօսքերի աղաւաղումն է: Այնուամենայնիւ շատ հետաքրքրաշարժ տեղեկութիւն է տալիս հնագէտ պրոֆեսսոր Սմիթնով վերոյիշեալ փաստի վերաբերմամբ *): Նա ասում է, թէ ներկայ հին Ղրիմի հին Սուրխաթ անունը — որի ծագումը դարձեալ դժուար բացատրելի է — պէտք է մեկնել ոչ թէ թուրք արմատներով, այլ «սուրբ խաչ» անունով: Նոր-Նախիջևանի ս. Գէորգ եկեղեցում հ. Բժշկեան գտել է մի աւետարան՝ գրուած 555 տարի առաջ, որն ունի այս մակագրութիւնը **):

«Հայկական ՉԼԶ Թուին վերջացաւ սուրբ մատնան աստուածախօս աւետարանս հոնաց աշխարհում, որ այժմ ասում է Ղրիմ, մեծ հոյակապ Սուրխաթ կոչուած քաղաքում, վերի հողեսներումս, ս. Խաչի մօտ, տէր Մխիթարի հայրապետութեան եւ տէր Ստեփանոսի եպիսկոպոսութեան միջոցում»:

Ուրեմն այդ ձեռագրի հիմամբ էլ կարելի է ասել, թէ գենուացիների ժամանակ էլ վանքը կոչուում էր ս. Սաչ, ուստի Սուրխաթ անունն ծագումը սուրբ խաչից լինելը մօտաւորապէս կարելի է ենթադրական համարել: Մի այլ պատմագրի ասելով ***) , հայերը Հին-Ղրիմին իբր թէ Կազարաթ էին ասում, սակայն ըստ Թէոդոսիայի հին յայտնաւուրքի՝ Կազա-

*) Записки восточн. отд. Имп. Рус. Археолог. общ., томъ I вып. V.

**) Հ. Բժշ. «Ճանապ. Ի Լեհաստան», 1830.

***) Келле: «Крымскій сборникъ».

բաթը հայկական մի մեծ աւան էր, ինչպէս մենք էլ վերն յիշեցինք, և գտնուում էր ս. Պաշի ստորոտում համանուն գետի մօտ, որին թաթարները անուանում էին Մուղալէոզէն, որ նըշանակում է մոնղոլի գետ: Հայկական աղբիւրների հիմամբ մենք գիտենք նոյնպէս, որ Կազարաթում նստում էր հայոց կողմապահ իշխանը իր զօրքերով և կարևոր դէպքում դուրս էր գալիս գննուացիներին պաշտպանելու: Ուրեմն Սոլխաթ, յետոյ Սուրխաթ առաջներում յօրինել են գննուացիները հայերէն սուրբ խաչ բառից — surb chatch: Օրինակողները գեղջել են Ե — բ տառը, մնացել է sur — սուր, chatch բառի մէջ ևա տեղ (չ) տառերը համարել են տի (թ) և փոխանակ կարդալու խաչ, ասել են խաթ, և եղել է Սուրխաթ:

Վերոյիշեալ աւետարանից իմանում ենք և այն, որ ս. Պաշը, բացի ներկայ շինութիւններից, ունեցել է և հողետներ, որտեղ մենակեաց կրօնաւորները առանձնացած գրեթէս են եղել մեծ քարոզչի մարդասիրական պատգամները: «Այդ միջոցին անմասն պէտք է լինէր, ասում է Պորէն եպիսկոպոս Ստեփանէն, Պաշի դիրքը, ուր բարձրադիր հողետներից շողշողալով կանթեղների լոյսը աստղերի նման կը յիշեցնէին հայ ճանապարհորդին, թէ այնտեղ հեռու այն աստղանման լոյսի առաջ նըստած հայ միանձները տքնում են օրինակելու աստուածախօս պատգամներ»:

Ափսոս որ վանքի հին վանահայրերը ոչ մի տեղեկագիր, ոչ մի թղթի կտոր չեն թողել թէ իրանց գործունէութեան մասին և թէ իրանց իմացածի՝ վանքի անցեալի վերաբերմամբ: Բարեբախտաբար կան այնպիսի արձանագրութիւններ, որոնք բաւական բան են պատմում մեզ: Այս վանքում ամբողջ մի քանի հարիւր տարի ապրելիս են եղել թեմակալ առաջնորդները, որոնք կառավարել են Ղրիմի թերակղզու հայազն ժողովուրդը: Կազարաթ հայկական մեծ աւանն էլ ս. Նշանի ծուխ կամ վիճակն է եղած: Վանքի երկու փոքրիկ բակերը բաժանող ամրակուռ պարսպի վրայ մի յիշատակարան կայ, որի շնորհիւ և իմանում ենք, թէ ո՞ր քաղաքներն են գտնուել ս. Պաշ վանքի թեմակալ արքեպիսկոպոսի իշխանութեան ներքոյ. և ահա այդ քաղաքներում բնակուող հայ ժողովրդի տուրքերովն է, որ նորոգուել ու բարեզարդուել է վանքը: Արձանագրութիւնը այս է.

«Ողորմութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաւ ս. Պաշ վանքս գեղեցկայօրինեալ, թէ տաճարն եւ թէ արտաքին սրահքն պարսպաւն պարագայիւք որ է աճող բոլոր կղզոյս լուսաւորչադաւան ազգիս. այսինքն Կաֆայու Ղարասիյու Պաղճասարայու Կեօղէվէյու

(Շւպատօրիա), բոլոր դիւորէիւքն հանդերձ Ղաւշանաւն ընդ նմին Ուռումեհեաւն որք եղին ձեռնտու բարեպաշտօրէն ջերմեռանդ սըտով արք եւ կանայք ողորմութեամբ. ի ժամանակի առաջնորդութեան յԱղամայ արքեպիսկոպոսի կղզոյս (որ էր աշակերտ Յովհաննու պատրիարքի Կօստանդնուպօլսոյ բաղիշեցոյ) որ եղի հոգարածու եւ պատճառ շինութեան բազմադիմի աշխատութեամբ վասն իւրոյ հոգոյն եւ նախնեացն. եւ եղի ներ (?) թվոջ Փրկչին մերոյ 1751. իսկ ըստ հայոց ՌՄ:

Ո՛վ բարեպաշտօնք ի յընթեռնուլ զարձանագրութիւնս յիշեցէք միով հայր մերիւ ի վերոյ գրեցեալ բարեպաշտօնքն եւ այցելու սըրբոյ տանս յԱղամայ եւ եթ արեղայն՝ *):

Սոյն յիշատակարանից վեր նոյն պարսպի վրայ կայ մի մեծ խաչքար՝ հինգ փոքր խաչերով, որի վրայի արձանագրութիւնը շատ հին է և աղաւաղուած:

Տաճարի արևմտեան դրան մօտ երեք գերեզմաններ կան, որոնք վանահայերի շիրիմներն են: Ամենահին գերեզմանաքարի վրայ (գլխի կողմը) փորագրուած է հետևեալը.

«Թուի ՌՃՄ այս է տապան հանգստեան Պետրոս վարդապետին սպասաւորի ս. Նշանին **):»:

Միւս շիրմի վրայ կայ հետևեալը.

«Է ներքոյ տապանիս այս հանգեալ Գէորք եպիսկոպոսն զՄիւրնոյ զաւառէն Եօտէմիշ քաղաքէն որ է թող զվշտալի կեանս 55 ամօք իւրով 1847 սեպ. 10):»:

Երրորդ գերեզմանը այն Մանուէլ վարդապետինն է, որի արձանագրութիւններէից, ինչպէս ինձ ասացին, Հաղբատի վանքումն էլ կան, որտեղ նա մի որոշ ժամանակ մնացել է որպէս միաբան: Ունի իր հեղինակած հետևեալ արձանագիր-տտանաւորը.

«Է ինձ հանգստեան վայելուչ տապան
Մարմնոյս պահարան առջի (առաջի) դրան
Այս սուրբ Խաչ վանքիս բակերտ զելարան
Նուաստ Մանուէլիս դատարկ պետ կոչման
Որ Կիւմիշխանայ առի շունչ մարդկան
Հազար եօթն հարիւր պարուք վաթսնդթեան
Էի սերնդովք ես ի Շահինեան
Լսել արդ խնդրեմ տէր ողորմի բան»:

*) Թէ Խորէն եպ. և Թէ հ. Բժշկեան մուսացել են վերջին երեք տողերը՝ «Ով բարեպաշտօնք... ևայլն յիշելու, Թէ և շատ պարզ կարդացուով է:

**) Խորէն եպիսկոպոսը այդ արձանագիրը չէ գտել: «Մ. Խաչ վանք». Ստեփանէ, էր. 10:

Ոտանաւորի սկզբնատառերը, ինչպէս տեսնում ենք, յօդոււմ են «Մանուէլ» բառը: Որ ոտանաւորը նրա սեփական արտադրութիւնն է, այդ էլ վկայում են նոյն տապանաքարի վրայ եղած հետեւեալ տողերը. «Սա զսոյն ոտանաւոր յիւրում կենդանութեան ինքնին գրաւ ի կենաց ի 1843 ամի եւ դեկտեմբերի 4»: Այս Մանուէլ վարդապետի ջանքերով է շինուած մի աւագանով աղբիւր:

Անցեալ դարու վերջին վանահայրերից կարող ենք յիշել նաև Սարգ. վ. Տէր Սարգսեանին, Գր. եպ. Սազինեանին, Եղիշէ վ. Ամատունուն և 1879 թ. Գր. եպ. Աղափիրեանին (հէնց այս թուականներին էր, որ թիւք-ուսական պատերազմի պատճառով Բեսարաբիայի կոնսիստորիան ժամանակաւորապէս տեղափոխուել էր այստեղ—ս. Սաչ վանք): Թէ ինչ գործունէութիւն են ցոյց տուել վերոյիշեալ վանահայրերը, մենք ոչ մի տեղեկութիւն չունինք. վանքում գոնէ ոչինչ չըկայ:

Մինչև Սորէնի այստեղ վանահայր նշանակուելը, այսինքն 1887 թուականը, վանքի կառավարութիւնը քանիցս յանձնուած է եղել Հին-Ղրիմի «աղա» երեսփոխներին, որոնք ղէպի կալուածները, պէտք է ասած, շատ անտարբեր, անհոգ են եղած: Սակայն վանքը ընդմիջտ ազատուում է այս անհամ դրութիւնից, երբ հանգուցեալ Սորէն եպ. Ստեփանէին տեղափոխում են այստեղ:

Այդ միջոցներին վանքը շատ ողբալի վիճակի մէջ էր, չունէր նոյնիսկ կարգին ճանապարհ, և կառքով բարձրանալը չափազանց վտանգաւոր էր: Երբ հանգուցեալ Սորէնին Պետերբուրգի քարոզչութեան հովուութեան պաշտօնից տեղափոխեցին այստեղ, նա եռանդուն կերպով սկսեց վերանորոգումներ անել վանքի շինութեան վրայ: Նրա առաջին հոգածութեան առարկան եղաւ ճանապարհի շինութեան ձեռնարկումը Հին-Ղրիմից մինչև ս. Սաչ վանքը: Վանքը ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ չունի առատ եկամուտի մի առանձին աղբիւր, որով կարելի լիներ հոգալ թէ վանահօր ապրուստը և թէ առանց կողմնակի օգնութիւնների նորոգութիւններ անել: Պէտք էր իհարկէ գտնել նուիրատուներ: Սորէն եպիսկոպոսի պէս ճարտար քարոզչի համար դժուար չէր նոյնիսկ քարացած սրտեր փափկացնելը, և ահա նրա խօսքի շնորհիւ գտնուեցին նուիրատուներ, որոնց նուիրած փողով նա նախ շինեց չորս վերստ տարածութիւն ունեցող ճանապարհը անտառի միջով, ուխտաւորների համար մի քանի սենեակներ վերանորոգեց, պարսպի շուրջը եղած պատշգամբները ամրացրեց, մի խօսքով

այցելունքի համար ամեն տեսակ յարմարութուններ ստեղծեց: Եւ ահա այդ ժամանակներից միայն կարգուկանոն մտաւ վանքի մէջ:

Բացի վերոյիշեալ գործերից՝ խորէնը մեծ ուշադրութիւն է դարձրել նաև վանքի սեփականութիւն 1200 դեսեսատին անտառի վրայ, որը կազմուած կանոնաւոր մակարդակից զուրկ էր: Նրա ջանքերով անմիջապէս կազմուեց մակարդակը, և անտառը անխնայ կոտորելուց միանգամայն ազատուեց: Հանգուցեալի վերջին գործը եղաւ տաճարի գմբէթի վերանորոգութիւնը, որի մասին արձանագրութիւն կայ գաւթի աջակողմեան պատի մէջ զետեղուած մարմարաքարի վրայ:

Վանքում մինչև այժմ էլ պահուած կան երեք հատ հին ձեռագրեր: Ինչպէս գրեթէ մեր բոլոր հին ձեռագրերը, նոյնպէս և սրանք կրօնական բովանդակութիւն ունեցող գրքեր են: Երբքն էլ գրուած են մագաղաթի վրայ: Առաջին ձեռագիրը աւետարան է, ծաղկանկար սկզբնատառերով, որի վերջին թերթի վրայ գրուած կայ հետևեալը.

«Նրկրորդ յանկամ կազմեցաւ սր աւետարանս ձեռամբ Աջօղլափու յունաց քահանայապետ Կոստանդին, ըստ խնդրոյ վանահայր Յարութիւն վարդապետ Ղազարեան Ղլլարեցուն որոյ վարձն հատոյց 10 ոււպի 30 կոպ. վերահասուծեամբ տէր Բարդղիմէօս նորընծայ քահանային զիլացու 1821 սեպ. 22 ի սուրբ Խաչ վանքն Ղրիմու: Գրուեցաւ ձեռամբ Յարութիւն վ. վանահօր»:

Երկրորդ ձեռագրի մէջ տեղաւորուած են բոլոր շարականները: Ձեռագրի վերջերում գրուած՝ շարականների վերաբերեալ ներբողին յաջորդում է նուիրաբերողի յիշատակագիրը: Ձեռագիրը նուիրած է ս. Աստուածածին եկեղեցուն. գրուած է հին Ղրիմ քաղաքում.

...«Արդ զրեցաւ սա ի գիւղաքաղաքին Ղրըմու առ ոտս սուրբ Աստուածածնին. ի հայրապետութեան ամենայն հայոց տ. Նղիազարու եւ յառաջնորդութեան յայսմ նահանգի Վարդանայ եւ Յակոբայ արքեպիսկոպոսաց. ձեռամբ փժուն եւ վերջին զրչի Իւալիթ դպրի ի Յովակնութեան հայկազան սեռի հաղար հարիւր եւ Լէ (1688)»:

Ձեռագրի հեղինակ դպիրը խնդրում է ընթերցողներին՝ «չմեղադրել անարուեստ գրիս՝ սխալանաց կամ խոշորութեան, զի կար (կարողութիւն ?) մեր այս էր»:

Երրորդ ձեռագիրը սաղմոս է, որի երկրորդ նորոգութեան վերաբերեալ գրած է հետևեալը.

«Հազար հարիւր վաթսուն եւ մէկի ի յունուարի քսան. ի կաթողիկոսութեան տեառն Տէր Աղէքսանդր Արքազան հայրապետի եւ

առաջնորդութեան բոլոր Ղրբմու քաչ ընդունուածն առաքելաշնորհ եւ դից եղերալուր տէր Ակոր աստուածաբան վարդապետի... նորոգեցաւ ձեռամբ ումնմն վատթար մեղսամսծ եւ անարժան միայն լոկ անուամբ կոչեցեալ տէր Գրիգորի որ է ծառայ եւ սպասաւոր սուրբ Լուսատրչի»:

Ձեռագրի մէջ—սաղմոսագրքի սկզբում գրուած է *ւսկաք զսայ թվին Ռի (1611) նոյեմբերի ա. աւգնեա ինձ սուրբ երրորդութիւնն*: Ուրեմն այս սաղմոսագիրք-ձեռագիրը գրուած է սրանից մօտ 300 տարի առաջ:

Ներկայումս վանքը ունի 1200 դեսեատին անտառ, երկու այգի Սուղախում, որոնք կապալով են տրուած իննը տարի ժամանակով: Վանքը մեծ կալուածք ունի նաև Պերեկոպի գաւառում, որից ստացուած 7000 ռուբլի գումարը ստանում էր էջմիածինը: Վաղ անցեալում վանքին է պատկանելիս եղել այժմեան Բողարանոցի ընդարձակ անտառը, սակայն բողարաները գաղթելով Քիւրքիայից այստեղ՝ սեփականացրել են:

Ձմեռուայ ընթացքում սարերից թափուող հեղեղները վանքի բոլոր երեք աղբիւրների ճանապարհներն էլ փչացրել էին: Վանքը զրկուած էր նոյնիսկ խմելու ջրից: Նորեկ վանահօր առաջին հոգածութեան առարկան եղաւ աղբիւրների վերանորոգումը: Բացի դրանից նա մեծ ուշադրութիւն դարձրեց նաև վանքի անտեսականի վրայ: Բաղմացրեց կթի կովերի թիւը, ոչխարներ, խոզեր, թռչուններ և այլ օգտակար կենդանիներ պահեց: Վերանորոգեց աւերակ սենեակներից մի քանիսը, մատաղատուն կոչուած ներքնայարկ սրահները դարձրեց գեղեցիկ մանաններ, կենդանիների համար առանձին գոմեր շինեց, այգին պարսպով շրջապատեց և այլն և այլն: Այս բոլորից յետոյ ներկայ վանահայրն՝ ինկատի ունենալով այցելուների ահագին բազմութիւնը, անհրաժեշտ է համարում ուխտաւորներին համար առանձին բնակարաններ շինել նոր ծաղկանոցի մօտ: Նա յոյս ունի վանքի կալուածներից ստացուած գումարով առաջիկայ դարնան կառուցանել այդ շէնքը: Դրանով անշուշտ մեծ յարմարութիւններ ստեղծուած կլինի ամառը վանքում ապրել ցանկացող ուխտաւորների համար:

Վանքը երկու ուխտ ունի տարուայ ընթացքում—Վերափոխմանը և Սաչվերացին: Երկու դէպքումն էլ հին-ղբիմցիները, մասամբ և թէղոսիայի հայերը մեծ բազմութեամբ գալիս են ուխտի: Մանաւանդ Սաչվերացին, երբ գիւղական աշխատանքը համարեա դադարում է, Հին-Ղբիմի շրջագայ գիւղերից ահագին թուով գալիս են տաճկահայ երկրագործ գաղթականները: Առհասարակ ուխտի օրերը մեծ հանդիսով են անցը-

նում վանքում: Անպակաս են ամառուայ ընթացքում նաև օտարազգի այցելողներ, որոնք ամենամեծ պատկառանքով դիտում, հետազոտում են այս հնադարեան անխախտ յիշատակարանը...

Սորէն եպ. Ստեփանէի մահից յետոյ ս. Սաչի վանահայր նշանակուեց Ն. վ. Նահապետեան:

ՄՈՒՐԽԱԹԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԻՐՈՒԹԵՐԸ *)

Պարսկաստանի քիւրդերը, ինչպէս ասացինք, բաժանուած են երկու խոշոր, միեւնոյն ժամանակ խիստ հակադիր դասակարգերի, աշիրէթներ կամ լաւ է ասել ձրիակերներ, և ուայա կամ աշխատող, կերակրող ձեռներ:

Ռայա դասակարգը գործ ունի գլխաւորապէս հողի հետ: Նա պարագում է երկրագործութեամբ. շատ տեղերում ցանում է բացառապէս ցորեն. պահում է խաշներ և մասամբ տաւարներ: Քիւրդերի ցանած հողերի մեծագոյն մասը դեմի (անջրդի) է: Դեմի արտերի սովորական ցանքան է բաւարար անձրևի ժամանակ մէկին 15—20. իսկ տարիներ են լինում, որ բերքը տալիս է 1-ին 25—30, դեռ էլ աւելի: Չմոռանանք այս էլ նկատել, որ պատահում են և սակաւ անձրևային տարիներ, որ դեմի հողերը տալիս են շատ աննշան բերք: Քիւրդը ամեն տարի բերքի մի որոշ մասը ծախելով՝ բաւարարութիւն է տալիս իր միւս պահանջներին: Իդէպ է ասել, որ քիւրդերի մէջ մինչև այժմ մնացել է աւանդական, դրամի ծագումից առաջ եղած առևտրի սովորութիւնը, այն է՝ իրեր, ապրանքներ փոխանակել. ցորեն չունեցող քիւրդը տալիս է խաշն կամ տաւար և դրա դիմաց ստանում ցորեն. դրամ շատ սակաւ է ճարուում քիւրդերի մօտ, մանաւանդ մեծ գումար, և առհասարակ քիւրդը փող չի սիրում:

Այսպէս ուրեմն, ուայա քիւրդերը պարագում են երկրագործութեամբ և անանապահութեամբ, իսկ աշիրէթները.

*) Տես «Մուրճ» № 5